## ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 37·

### Ա· Գրքի էջ· 243· ծ·

### (No, 362· Լիմից բերուած Լալ· ցուց· 653)

*Գրեցաւ սբ· աւետարանս այս ձեռամբ Զաքարա եպսի· ի գաւառս որ կոչի Ամուկ ի կղզինս* (s!), *որ կոչի Լիմ, ընդ հովանեաւ սբ· Գէորգա զաւրավարին ի հայրապետութե· տն· Գրիգրիսի եւ ի թագրթե· Խոնթքար անուն փատշահի· որ է տառապանք ազգս* (s!) *հայոց յաւմու* (s!) *ժամանակիս վասն ծովացեալ մեղաց մերոց· ի թուաբերութե· հայոց ՋՂԸ* (1549:*

*Մատթէոսի պատկերի տակ·*

*«Զաքրա· եպս· նկարողս յիշեցէք ի տր»:*

---

*Յիշատակարանը բուն գրչի ձեռքով չէ գրուած, բայց ամբողջ ձեռագիրը մի գրչի գործ է· նկարները ու հատուածների թռչնագիր սկզբնատառերը, աւետարանիչների սկսուածները ու զարդագրերը նոյն նկարչի՝ Զաքարիայի ձեռքով:

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 38·

### Ա· Գրքի էջ· 250· Բ· Գիրք 122·

### (No. 1075/1088 Մաշտոց, Թուղթ)

93ա· *Փառք ամենասբ· երրորդութե· հաւր եւ որդւոյ եւ հոգոյն սբոյ· յամ· գոյեղէն յարարածոց եւ ի գերապայծառ սրոց· յամ· ժամ եւ յամ· յաւիտեանս ամէն:*

*Որ ետ կարողութի· ակարիս հասանել աւարտ գծիս: Արդ գրեցաւ սայ ի թուականութեա· հայոց· ՌԹ· ի երկիրս արարատեան, ի ձորս Քեղոյ/*

93բ· *ի վանքս որ կոչի Վանըստան ի դուռս սբ· Ածածնիս· եւ այլ բազմահաւաք սրցս· որ աստ կան հանգուցեալ: Արդ ես Հայրապետ եպս· ետու գրել զսբ· գրքս* (s!) *որ կոչի ձեռնադրութի· ի նոր, ի լաւ եւ ի ընտիր յաւրինակէ Սիմէոն բարունապետին: Արդ ես Հայրապետ եպս· ետու գրել գիրքս յիշատակ ինձ եւ ծնաւղ//*

94ա· *աց իմոց, հաւրն իմ Խէսարին եւ մաւրն իմ Գուղիդին եւ եղբարցն իմ պրն· Միրաքին, պրն· Պառչին· եւ ամ· արեան մերձաւորաց· ամէն:*

*Արդ ես Հայրապետ եպս· ետու զսբ· գիրքս ի դուռն սբ· Ստեփանոսին, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց· հաստատուն պահող գրոցս ահնին· Այ· եւ ի մէնջ ամեն· գրեցաւ թվկնիս: ՌԹ· ի հայրապետութե· տն· Գրիգրի* (s!)*· ի թգւրութե· Վրաց Սիմոնի·/*

94բ· *ի ղանութե· Թահման շահին· Եւ զմիաբանքս սբ· ուխտիս զտր· Հայրապետ եպս· առաջնորդ, զտր· Եղիայ հայրաքիրն պրն· ապաշխարող Արայիչն, որ բազում ժամանակ ծառայեց վանիցս· Ած· զիւր գործեցեալ մեղք թողու· ամէն:*

*Սակաւ ծրաւղս Խաղս, Թափուրս ի բարեաց, փարթամս ի չարաց, աւաղ, որ ղրկել· եմ այսպիսի չնրհաց· դուք պատրաստ կացէք:*

## ՅԱՒԵԼՈՒԱԾ Բ· 39·

### Բ· Գրքի էջ· 132·

### (No. 1501/1512· Ցայսմաւուրք· Նկարազարդ)

558բ· *Յիշատակարան սբ· գրոցս·*

*Փառք ամենասբ· ամենազօր եւ կենդանարար սբ· երրորդութեն...*

559ա· *Արդ՝ այսմ հոգեւոր եւ ածային· եւ մեծափառ գանձուցս ցանկացայ զմի յորդւոց եկեղեցւոյ· եւ տեսի զգրութիս· սպասուցն եւ կարգացն, եւ զզանազանութիս· ամ· գահիցն, զոր եդեալ է ի փառս Այ· եւ ի յօգուտ մեր· եւ ի լուսաւորութի· հոգւոց մերոց· եւ ցանկացայ տրփմամբ հոգւոյն այսմ բազմաշխատ մատենիս եւ գրել ետու զսա ի յարդար վաստակոց իմոց· հետեւելով այնմ երանութե·, զոր մրգրէն· ասէ· երանի որ ունի զաւակ ի սիոն եւ ընտանեակ ի վերին Եէմ: Եւ սկսայ տալ գծագրել մի ըստ միոջէ զմարգարտաշար բանս ի սփոփանս մտաց բանասիրաց անձանց: Մանաւանդ ի սէր սիրելեացն Այ· եւ ի պայծառութի· սբ· եկղցւոյ: Զլուսատուս հոգւոց եւ զմխիթարիչս մտաց: Զափոփանս սըրտից եւ զսոսկացուցիչս մարմնոց: Զյիշատակ արեամբ ներկեալ մարտիրոսացն· նահապետացն, նախահարցն, սրբոց մարգարէիցն մինչեւ ի խոնարհիլն որդւոյն Այ· եւ յիջանել յերկնից կամաւ հօր եւ սբ· հոգւոյն, գալ բնակիլ յամէնօրհեալ սբ· կոյսն Մարիամ աւետեօքն Գաբրիէլի: Եւ զսբ· ծնունդն Քի· Զառաքելոց· Զհայրապետաց· Զվրդպտց· Զճգնաւորաց: Զկուսանաց: եւ Զամուսնացելոց սրբոց· զվարս եւ զյիշատակս՝ եւ զվկայութիս: Զի եւ նք· հետեւեցան վս· սիրոյն Քի·՝ ազգի ազգի տանջանօք յանհաւատից բռնաւորաց: Ոմանք հրոյ· ոմանք սըրոյ մատնեցին զանձինս իւրեանց ըստ բանին տն·, որ ասէ· Որ ուրասցի զանձն իւր վս· իմ, գտցէ զնա: Եւ առաքեալն հրամայէ· եթէ չարչարանացն կցորդ լինիմք, եւ հաղորդ փառացն լինելոց եմք: Ոպ· եւ քաջ նահատակքն կրեցին, թէպէտ եւ ոչ կարեմք հանդիսանալ քաջ արանցն հետեւողացն Քի· տանջանօք կամ մահուամբ գլխովին: Այլ եռափափագ տենչմամբ բաղձանօք սրտիւ զտօն սրբոցն կատարեն, եւ զյիշատակարանս նց· կարդալ բարեխօս կալցուք զնս· առ հանդիսադիրն ամենեցուն Յս· Քս· ըստ առաքելոյ բանին որ ասէ, թէ մար/*

559բ· *մին եմք ի մարմնոց նր· եւ անդամք յանդամոց նր: Թէպէտ եւ չարչարանօք ոչ կարեմք յօդիլ ի գլուխն մեր՝ ոպ· եւ արի վկայքն: Այլ ի գիշերի հսկելով, աղաղակելով, արտասուելով առ տր· զի եւ զմեզ նոցին պսակացն մասնակից արասցէ: Մանաւանդ զստացող գրոցս զՆրեմիա քհնյս·, որ ստացայ զվարդափթիթ բուրաստանս, յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց:*

*Դարձեալ յիշեցէք ի Քս· զբարեմիտ եւ զհեզահոգի, զմաքրասնունդ եւ զհոգելլի, զողորմածաբարք եւ զգըթածասիրտ, զաղքատասէր եւ զաղօթասէր զՆրեմիա քհնյն·, եւ զծնօղսն իւր՝ զհայրն Զաքարիայն, եւ զմայրն զՇաղոսկին, եւ զամուսինն իւր զԽանաղէն· եւ*